

## Արուսյակ Ղարիբյան

## ՀԱՅՈՑ ԻՆՔՍՈՒԹՅԱՆ ԱՐՔԵՏԻՊԱՅԻՆ ԳԾԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԷՊՈՍՈՒՄ

**Բանալի բառեր**- էպոս, ազգային ինքնություն, ինքնության ձգնաժամ, օտարում, ազգային հոգեկերտվածք, ինքնության արքետիպեր:

Ազգային ինքնությանը վերաբերող հիմնախնդիրների ուսումնասիրությունը ժամանակակից աշխարհում նոր հնչեղություն է ստանում: Համաշխարհայնացման արագ-ընթաց միտումներն օրուստորե խորացնում են ազգային ինքնության ձգնաժամը, որը համընդհանուր բնույթ է կրում: Այդ ձգնաժամը տարբեր երկրներում դրսևորվում է տարբեր ձևերով, տարաբնույթ ընթացք է ստանում և ուրվագծում է տարատեսակ հետևանքներ<sup>1</sup>: Արդի ժամանակաշրջանը նշանավորվեց ոչ միայն համահարթեցման համընդհանուր միտումներով, այլև էթնիկական, քաղաքական և այլ հակամարտություններով, որոնք հաճախ անջատողական և ծայրահեղական բնույթ են կրում: Մի կողմից առաջ է մղվում աշխարհի քաղաքացու մասին բաղձալի գաղափարը, մյուս կողմից մտահոգության տեղիք է տախի սեփական դիմագիծը կորցնելու և գլորալիզացիայի հորձանուտում տարալուծվելու վտանգը, այս համատեքստում ազգային ինքնության հիմնախնդրի հետազոտությունն առանձնակի կարևորություն է ծեռք բերում: Ազգային ինքնության առանձնահատկությունների ուսումնասիրությունը անպայմանորեն պահանջում է հաշվի առնել վերջինիս բնորոշ դինամիզմը, սակայն այդուհանդերձ նրանում առանձնանում են որոշակի կայուն, տիպական գծեր, որոնք, սերնդեսերունդ փոխանցվելով, ծեռք են բերում աշխարհայացքային և ձանաչողական կարևոր նշանակություն: Այդորինակ բյուրեղացած, արքետիպային գծերը նախ և առաջ արտահայտվում են հավաքական ստեղծագործություններում, ինչպիսիք են առասպելները, ժողովրդական հեքիաթներն ու էպոսները, որոնք ել դարերի և հազարամյակների ընթացքում զուում են այն արժեքայինն ու կենսականը, որն ազգը պրորեն փայփայել է: Արքետիպերը (յունայան ընթանամբ) կոլեկտիվ անգիտակցականի բովանդակությունն են, նախասկզբնական, համընդհանուր ձևեր են, որոնք արտահայտվում են գլխավորապես վերոնշյալ ստեղծագործություններում<sup>2</sup>: Սույն աշխատանքի նպատակն է վերհսկել հայոց ինքնության այն արքետիպային գծերը, որոնք արտահայտվել են հայ ժողովրդի հավաքական ստեղծագործության՝ էպոսի խորին շերտերում ծառայելով որպես էպոսատեղծ ժողովրդի ազգային հոգեկերպածքի բացահայտման յուրօրինակ բանալիներ:

Հերոսական էպոսն իր մեջ ներառում է ոչ միայն ժողովրդի դարավոր իմաստությունը, բարոյական հրամայականների ու կենսընթացի ընկալման յուրօրինակ համակարգը, այլև հանդես է գալիս որպես սեփական անցյալի իմաստավորում: «Ցանկացած ժողովրդական էպոս նաև տվյալ ժողովրդի պատմության վստահելի աղբյուր է, որովհետև այնտեղ, թեև անուղղակի ու չհամակարգված ձևով, պարունակվում են հետաքրքիր տեղեկություններ ու փաստեր էպոսաստեղծ ժողովրդի պատմական անցյալի, նրա անցած ձանապարհի, ծեռքբերումների ու կորուստների, հաջողությունների ու անհաջողությունների, անզամ իսկ այլոց պատճառած ավերածությունների ու կոտորածների նասխն»<sup>3</sup>: Ավելին՝ էպոսի նշանակությունը չի սահմանափակվում միայն պատմական անցյալի յուրօրինակ արտահայտմամբ: Այն համարական է բնույթով, քանի որ իր մեջ ամփոփում է նաև ժողովրդի հոլովական, երևակայական աշխարհնկալումը, որն էլ վկայում է էպոսի սերտ կապն առասպելի հետ: Ժողովրդական էպոսը

<sup>1</sup> Хантингтон С., Кто мы? Вызовы американской национальной идентичности, М., 2004, сс. 36-37.

<sup>2</sup> Юнг К., Об архетипах коллективного бессознательного, М., 2007, сс. 2-6, [www.biblioclub.ru](http://www.biblioclub.ru)

պատմականի և դիցաբանականի ներդաշնակ միասնություն է, որն ավելին է, քան վերջիններիս ուղղակի միագումարը: Եպսն իր մեջ խտացնում է ժողովրդի սպասումներն ու իղձերը, պատմական անցյալի իրադարձություններն ու դրանց հմաստավորումները, ինչպես նաև աշխարհանաչողության ցուցիչներն ու ապագայի մարտահրավերները: Եպսն ընդգրկում է ժողովրդական կյանքի անբողջությունը և հարազատորեն հանդես բերում այն բարոյագաղափարական աշխարհը, որտեղ կենտրոնանում են ժողովրդի դարավոր նաքառումներն ու հեռավոր իդեալները, նրա հոգեկանբարոյական կարողությունները<sup>1</sup>:

Ժողովրդական էպոսը հագեցած է բազմախորհուրդ դիպվածներով, խորհրդանշային հմաստներով, ծածկագրված սրբազն պատմություններով: Վերջինները շատ երկար են հաղորդվում բանավոր, մինչև գրի են առնվում: Այսպես է եղել նաև հայկական էպոսի դեպքում, որը գրի է առնվել իր ծևավորումից դարեր անց: Հայ էպոսգիտության շուրջ երկդարյա պատմության ընթացքում բազմաթիվ հետազոտողներ են վերհանել և ընդգծել էպոսի արժանիքները, փորձել բացահայտել նրա էլեմենտները ու ողջ խորությունը, այդուհանդերձ մինչ օրս չեն դադարում էպոսի ուսումնասիրությունները և նրանում նորանոր շերտերի ու խորհուրդների բացահայտումները: Էպոսի ասացողները դարեր շարունակ իրենց ունկնդիրներին ավանդել են այն իբրև սրբազն պատմություն, բացահիկ ստեղծագործություն, որպես զիր գրոց: Եվ ուրեմն ինչպես ենք այսօր հասկանում դարերի հմաստությունն ամփոփող այդ երկասիրությունը, որը պարզապես ժողովրդի ստեղծագործական մտքի թթիք չէ, այլ նրա կենսափիլիստիկայությունն ամփոփող սրբագործված ստեղծագործություն: Արդյո՞ք մենք հասկացել ենք վերջինիս ողջ խորությունն ու կարևորությունը, որի արժեքը չի սահմանափակվում լոկ ժանրային հատկանիշների շրջանակներով: Մարդկության հիշողության մեջ պահպանված տեքստերը զիսավոր ուղին են նյութական և հոգևոր իրականությունների միասնականության ընկալման համար և փաստում են հոգենյութական միասնությունը՝ որպես կյանքի միակ կերպ: Կյանքն այնտեղ է, ուր կան հոգևորն ու նյութականը միասին: Հայ ժողովրդի «Սասնա ծռեր» էպոսը ևս խորհրդանշում է կյանքի հոգենյութական միասնությունը, ինչի շնորհիվ դարձել է հայ ժողովրդի «աշխարհիկ» կոտակարանը<sup>2</sup>: Հենց էպոսի հերոսներն են, որ սերունդների մեջ ծևավորում են հերոսականի մասին պատկերացումները, ժողովրդի երազանքներն ու արժեքային համակարգը: Մենք այն ենք, ինչ մեր իղձերն են, մեր ստեղծած հերոսականի ընկալումը հետազոյում կրկին արտացոլվում է իրականության մեջ, և այդ հոգենյութական միասնությունը վերածնվում է հաջորդ սերունդներում: Ապրիլյան քաջորյա պատերազմը հայի հերոսական ոգու անվերջանալի վերածնությունների շղթայում հերթական հավաստիքը դարձավ: Շուրջ քառորդ դար առաջ Արցախյան գոյանարտում հաղթանակած հայը այսօր էլ ապացուցեց աշխարհին իր հերոսական ոգու մղումը: Հայի համար պայքարը կարծես թե դարձել է կենսածն, սեփական ինքնության այցեքարտ: Սոցիալական բազմաթիվ խնդիրներով ժանրաբենները և իրեն բաժին հասած ճակատագրից դժգոհ հայն այս անգամ էլ ապացուցեց, որ գոյատևման բնագդը նրա մեջ ամենացայտուն ձևով է արտահայտված: Չափազանց արեղծվածային, որոշ դեպքերում նոյնիսկ պարադոքսալ է թվում այսօրվա հայի կերպարը: Ո՞վ է այսօրվա հայը, արդյո՞ք նա նոյն է, ինչ դարեր առաջ, ո՞րն է նրա էլեմենտը և գոյության առհավատցան: Հարցեր, որոնք կարոտ են պատասխանի: Մի կողմից՝ սարսափեցնող են տարեցտարի մեծացող արտագաղթը, հիասթափությունը խորացնող հոռետեսական տրամադրությունները, մյուս կողմից՝ հանկարծահաս պատերազմին միասնականորեն և քաջաբար արձագանքող կոլեկտիվ գիտակցությունն ու կամքը նոր հոլյսեր են ներշնչում: Խորամուխ լինելով հայ ժողովրդի հավաքական ստեղծագործությանը՝ բազում հարցեր պատասխան են ստանում: Մեր ոյուցագուները՝ Մեծ Սիերը, Դավիթը, Փօքր Սիերը հայրենի հողի փրկության համար չեն խնայել իրենց կյանքը, նրանք պատրաստ էին մինչև վերջին շունչը ծառայել հող հայրենին,

<sup>1</sup> Թումանյան Հ., Ուսումնասիրություններ, օրագրեր և այլ նյութեր, հ. 8, Ե., 1999, էջ 311:

<sup>2</sup> Տոնյան Թ., Արյան և խոսքի (բանի, տեքստի) համընկալումը հայերենի լեզվամտածողական համակարգում. Զենով Հովհաննես, «Հայկական ինքնության խնդիրները 21-րդ դարում», Ե., 2013, էջ 158-159:

սակայն երբ Երկիրը խաղաղ ժամանակներ է ապրել, նրանք անմասն են մնացել վերջինիս զարգացումից, մեկուսացած, ամենքն իր հոգսերով է տարվել կամ էլ առհասարակ բացակայել են հայրենիքից տարբեր, երբեմն անհեթեր պատճառներով. «Էպոսի հերոսները փոխանակ ներգրավվելու Երկրի շենացման, բարեկարգման ու սոցիալական կյանքի բարեփոխման, ուժեղ պետության կառուցման գործին, անիմաստ պատրիվակներով Երկար ժամանակով հեռանում են Երկրից՝ անտեր ու անպաշտապան թողմելով Սասնա բնակչներին: Այսպես, Մեծ Միերը յոթ տարի մնում է Մըսրում՝ ջրելով «Խալիսի արտօ», Դավիթը յոթ տարի շրջագայում է Գյուրջիստանում՝ քառասուն վահալանների համար հարսնացու փնտրելու նպատակով, Փոքր Միերը՝ տուն ու կնիկ թռիած, տարիներով թափառում է Երկրից Երևի, կրվում ուրիշների համար... »<sup>1</sup>: Մերօրյա իրականության պատկերը գրեթե անփոփոխ է մնացել: Դարեր են անցել, բայց հայ ժողովուրդը դեռևս անհաղորդ է իր էպոսի դասերին, մինչ օրս ամեն ինչ այնպես է, ինչպես էպոսում: Ոմանք սոցիալական ծանր բեռլ թոթափելու, որոշներն էլ հեռավոր ափերում լուսավոր ապագայի ակնկալություններով, երրորդներն էլ Փոքր Միերի պես անարդարություններից հիմաքափած լքում են Երկիրը: Ասես մեր ինքնության քարանձավում Փոքր Միերի պես աշխարհից խռոված սպասում ենք մինչև Երկիրը փոխվի, աշխարհը փոխվի: Այսօր էլ հայ ժողովուրդը շրջապատված է թշնամիներով և դամոկլեսյան թուրք գլխին տարված է իր առօրյա խնդիրներով կարծես թե նա մի տեսակ վերացարկված է ընկալում իրականությունը: Սակայն ինչպես էպոսի հերոսների դեպքում է, այնպես էլ իրական կյանքում, նա սրափվում է թմրիրից, երբ Երկրին վտանգ է սպառնում, երբ զոհասեղանին հայրենիքն է, այդժամ պառակտված, հուսալքված, բողոքավոր հայը մի բռունցք է դառնում: «Ազգային գոյութեան խնդիրը – ահա՛ թէ ինչն է կազմում հայոց պատմութեան առանցքը»<sup>2</sup>: Գիտակցելով յուր գոյությանը սպառնացող վտանգը՝ նա սրափվում է և ընտրում պայքարի ուղին, այնպես, ինչպես էպոսի հերոսներն են սրափվում, երբ կանխազգում են մոտալուս օրհասը. հայի մեջ գոյության բնազդը կրկին արթնանում է, և նա առժամանակ գիտակցում է իր «խսկական» կեցությունը: Գոյության (ինքնապաշտապանական) բնազդը գործում է թե՛ անհատական և թե՛ կոլեկտիվ մակարդակում, սակայն դրա դրսևորումները տարբեր են և արտահայտվում են յուրօրինակ կերպափոխություններով: Խոսքը վերաբերում է ոչ միայն ֆիզիկական գոյությանը, այլև սեփական ինքնության հիմքերի խարիսմանը՝ հոգեպես բնաջնջվելուն: Հայ ժողովորդի պատմության էջերուն սակավ չեն դեպքերը, երբ նա մարտի է ելել ոչ թե յուր ֆիզիկական գոյությունը պաշհպանելու համար, այլ իր հոգևոր ժառանգության ու բարոյական արժեհամակարգին սպառնացող վտանգը կանխազգալով: Հայկական էպոսում պայքարը սկսվում է հենց այս հենքի վրա. Գագիկ թագավորը չի ցանկանում իր դստերը կնության տալ կռապաշտ խալիֆին: Գիտակցելով իր ժողովորդին սպառնացող վտանգը՝ Ծովինարն անձնվիրաբար համաձայնում է՝ սեփական ես-ի գոյությունը կասկածի ենթարկելով և նվիրաբերելով մենք-ի բարօրությանը: Գոյության համար մղվող պայքարում երևան են զալիս ազգի ոչ միայն կամային հատկանիշները, այլև բարոյական հրանայականների համակարգը: Ասվածի վկայությունն է մեր էպոսի հերոսների վարքագիծը՝ խաղաղասիրությունը, մարդասիրությունն ու ներողամտությունը, որը դրսևորվում է ոչ միայն յուրայինի, այլև օտարի, թշնամու հանդեպ<sup>3</sup>:

Էպոսը մտահեցած հայ ժողովուրդը իր կեցության իմաստավորումներում արտահայտել է այն, ինչ դարեր հետո փաստեցին էկզիստենցիալիստները. մարդը գիտակցում է իր կեցությունը սահմանային իրավիճակներում՝ սարսափին և մահվանն աշերեսվելիս: Ապագայի վտանգներն ու մահվան սարսափը, ինչպես նաև գոյության բնազդը ստիպում են օրհասի պահին ուշքի զալ և պայքարել (վկան՝ մեր պատմությունն ու էպոսը): Այս առնչությամբ բավական է հիշել էպոսից գոնե մի դիպված (թեպետ

<sup>1</sup> Զարարյան Ս., Հայկական էպոսի հերոսների վարքագիծը ազգային ինքնության համատեքստում, «Բանբեր Երևանի համալսարանի», Փիլիսոփայություն, Հոգեբանություն», Ե., 2015, № 2 (17), էջ 3-16:

<sup>2</sup> Նժդեհ Գ., Հատընտիր, Ե., 2006, էջ 353:

<sup>3</sup> Տե՛ս Ղարիբյան Ա., Սասունցի Դավիթ բարոյական նկարագիրը հայոց ինքնության համատեքստում, «Հայոց ինքնության հարցեր 2», Ե., 2014, էջ 109-123:

դրանք բազմաթիվ են): Դավիթը Մսրա Մելիքի խարդախության և իր դյուրահավատության պատճառով հայտնվել էր խորը հորում, այդ գիշեր Զենով Հովանը երազ է տեսնում, կօահում, որ Դավիթին փորձանք է պատահել և դիմում է նրան .

«Դավիթ ո՞՞ ես,  
Հիշա՛, Մարութա բարձր Աստվածածին,  
Հիշա՛, գլուխ Պատերազմին,  
Ինչ վեր քո թէին,  
Ու թափ տուր քեզ ...»<sup>1</sup>:

Դավիթը լսելով հորեղբորը՝ թափ է տալիս իրեն, պատռում շղթաները և դուրս գալիս հորից: Եպոսը հուշում է՝ մի մոռացիր, թե որու ով ես և հիշիր ամեն անգամ, երբ հեռանաս քո ինքնությունից, կվտանգես քեզ: Չէ՞ որ Հովհանը ինքն օգնության չեկավ, այլ պարզապես հիշեցրեց Դավիթին նրա էռլյունը, հուշեց, որ «Վիրկության բանալին» նրա՝ ձեռքում է: Ինչպես մեր էպոսի հերոսները, այնպես էլ մեզանից շատերը հաղթահարում են բազում դժվարություններ, երբ խորապես գիտակցում են իրենց գոյության հիմքերի խարխման վտանգը: Այդ գիտակցումը փրկում է մեզ ամեն անգամ, փրկում այնպես, ինչպես Դավիթին օգնեց դուրս գալ հորից: Եվ ուրեմն, ականջալուր լինելով էպոսի դասերին, հարկ է կեցության սեփական որոնումներում ինքնաճանաչման փորձերը դարձնել կյանքի ուղենիշ և հիշել ոչ միայն սահմանային իրավիճակներում, մահվանն ու սարսափին առերեսվելիս, այլև կենսընթացի ամեն պահին:

Գոյության բնագործ պայմանավորում է հայոց ինքնության մյուս՝ այն է սեփական բացարիկության և հավերժության մասին արքետիայի դրսւորումը. «Արտաքին հանգամանքներից ածանցյալ գոյատևման փաստը հայ ժողովրդին հաճախ հարկադրել է իր հավերժությունը դրսւորել և իմանավորել աշխարհում իրեն վերապահված բառաթելությամբ»<sup>2</sup>: Այսպիսով՝ կարծես հայտնվում ենք յուրօրինակ փակ շրջանում, մենք հավերժորեն գոյություն ունենք, հետևաբար բացարիկ ենք և քանի որ բացարիկ ենք, ուրեմն միշտ կինենք: Հազարամյակներ շարունակ դիմակայելով թշնամական հարձակումներին, հալածվելով և օտարի լծի տակ գոյատևելով, կորցնելով պետականությունը և պատմական հայրենիքից պահպանելով նրա մի փոքրիկ պատարիկ՝ այդուհանդերձ հայը չի հուսալքվել, իր պատմությունից կարծես մի բան է հասկացել, որ ինչ էլ անցնի իր գիտով, ինչ հումկու հողմեր էլ գան ու գնան, նա կմնա անսասան իր սրբազն հայրենիքի հետ միասին, չէ՞ որ Բիբլիական Արարատի ստորոտից է սկիզբ առել նոր ուխտի սերունդը: Ըստ Աստվածաշնչի՝ Նոյն իր երեք որդիների հետ համաշխարհային ջրհեղեղից հետո հաստատվել է Արարատ լեռան ստորոտում, որտեղ էլ վերածնվել է մարդկային ցեղը: Այս ավանդագրույցը հայկական ազգային հոգեկերտվածքում խորապես արմատացրել է քրիստոնեական ընտրյալության և փրկչական առաքելության, մարդկային ցեղին ծառայելու և հանուն այդ նպատակի որոշակի գոհողությունների ենթարկվելու մասին պատկերացումները: Ժամանակի ընթացքում այդ պատկերացումները հարթվել են, սակայն «ընտրյալի» զգացողությունը պահպանվել է, թեպես կերպափոխվել է արդի պայմաններում<sup>3</sup>: Հայ ժողովուրդը դարեր շարունակ պայքարել է անողոք զավթիմերի դեմ սեփական հավերժության հավատը սրտում. չէ՞ որ իր հայրենիքում է գտնվել մարդկության կորուսյալ դրախտը, այստեղից է կյանքը կրկին սկիզբ առել: Այս է ավետել մեզ պատմահայր Խորենացին. «Ուրախացի՛ եւ ցնծա՛, Հայաստան աշխարհ, նո՞ր Խսրայէլ, Երկի՛ր աւետեաց եւ դրա խստ աստուածատունկ՝ զարդարուած առաքեալներով եւ մարգարեներով եւ սրբերի լուսեղէն դասերով ... Զուարձացի՛ և հրճուի՛ նո՞ր Սիոն...»<sup>4</sup>: Սրբազն հայրենիքի և իր հավերժության մասին պատկերացումները չեին կարող չարտահայտվել նաև ազգի հավաքական ստեղծագործության մեջ: Էպիկական մեր վերջին հերոսն անմահ է, նա սպասում է,

<sup>1</sup> «Սասունցի Դավիթ հայկական ժողովրդական էպոս», էջ 240-241:

<sup>2</sup> Հայությունյան Ե., Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Ե., 2004, էջ 91-92:

<sup>3</sup> Պոգոսյան Ր., Արմանակությունը և առաջարկությունը մասնակիության մեջ, Ե., 2003, էջ 399.

<sup>4</sup> Խորենացի Մ., Սուրբ Հռիփսիմեթի և նրա վկայակիցների հիշատակին նրանց նահատակությանը [նվիրված] ներբողյան՝ հրաշազարդ հորինվածներու, «Գանձասար», Գ, Ե., 1993, էջ 14:

հավատում է, ավելին, նա խոստացել է Վերադառնալ: Փոքր Մհերն ընդգում է անգամ Աստծու դեմ, նրանից կրիվ պահանջում ապացուցելով իր անմեղությունն ու աշխարհի անարդարությունը՝ առժամանակ հեռանալով. «Կանգնի, իմ թուր զարնեմ էդ քարին,

Թե կտրեց, ես չեմ մեղավորցեր,

Թե չկտրեց, մեղավորցեր եմ:

Թուր որ էզար քարին,

Քար երկու կողմեն փեղկվավ,

Ինք, իր ձին գնացին մեջ... »<sup>1</sup>:

Իր անմեղության մասին Վերջին կասկածները փարատած և աշխարհից խօռված Մհերը այդ ամենից հետո էլ մեկընդիմիշտ չհեռացավ, այլ պայման դրեց աշխարհի առջև՝ միաժամանակ պատզամելով սպասել իր Վերադարձին: Էպոսը հուշում է՝ հայր Վստահ է, որ եթե աշխարհը կրկին կործանվի, ինչպես դա եղավ Մեծ ջրհեղեղի ժամանակ, միևնույն է ինքը փրկվելու է, քանի որ հայս անմահ է ինչպես իր Վերջին դյուցազնը, աշխարհից խօռված, բայց արդարության ու անմահության փափագը սրտում.

«Ստեղծել է նա իր հեքիաթները, -և իր

Հնամյա վեպում հանձարեղ –

Իր ապագա կյանքի գաղափարը կարմիր

Եվ անմահ խորհուրդն է դրել»<sup>2</sup>:

Անմահության և լուսավոր ապագայի տենչանքը վերածվել է կուր համոզնունքի. յուր հավերժական գոյությանը հավատացող հայր պատրաստ է դրա համար վճարել ամենաթանկ գինը, նա կարծես գիտի, որ իր գլխով շատ փորձություններ են անցնելու, իր ճանապարհը լի է խութերով ու զոհողություններով: Մի՞թե այս մասին չի գգուշացնում էպոսը, երբ քեզի Թորոսը Փոքր Մհերի խուփ ծեռքը բացում է.

«Թորոս առավ ըզտողան, տեսավ.

Զնանուկի ծեռք մաժեց, մատներ բացվան.

Տեսավ կաթ մի արյուն ծեռքի մեջ

Ասաց. – Հայ, հայ, թե քար էսօր մուտ տա, մուտ տա,

Հող չի կարնա պահի.

Զաշխարհը արեր է կաթ մի արյուն,

Դրեր է մեջ ծեռքին:

Թե որ էդի մնաց,

Էդոր մոտեն զարմանալի բան տէլնի»<sup>3</sup>:

Էպոսը կանխատեսում է հայ ժողովրդի ճակատագրի ողջ դրամատիզմը: Հայը իր կանխատես ոգու հությունն է արտահայտել էպոսում, որն ասես մարգարեւություն լինի յուր արյունոտ բախսի մասին: Գու՞ցե այդ է անմահության գինը: Մի կաթիլ արյունը գումարեց Մհերի դաժան ճակատագիրը, ինչպես և իր ժողովրդի դժխտմ բախսուր: Հայի սրտում դեռ չեն սպիացել մեկ դար առաջ կատարված արյունալի ոճրագործության վերքերը, սակայն ինչպես իր Վերջին դյուցազնը, նա շարունակում է իր գոյության կրիվը, թեպետ հաճախ այն վերածվում է խօռվքի, աշխարհից և նույնիսկ սեփական հնքնությունից օտարնան: Ինչպես Փոքր Մհերը, նա սպասում է հատուցման բաղձակ ժամին. «Ահա ե՞ս եմ, Հավերժական Հայը, կանգնած Եղեռնի ու Երկրաշարժի մեջսեղում՝ արնամած աչքերս հառած Մասիս սարին ...»<sup>4</sup>: Փոքր Մհերի ափում փակված մի կաթիլ արյունը և անժամկետ փախուստն անարդար աշխարհից հուշում են սեփական արյունալի ճակատագրի անխուսափելիության և յուր հավերժական գոյության գիտակցման, ինչպես նաև սպասված վերադարձի փափագի մասին:

Ընդհանրացնելով կարելի է փաստել, որ հայոց ինքնության արքեստիպերը գաղտնագրված են նրա մեծագույն ստեղծագործության՝ ժողովրդական էպոսում, որի համակողմանի և խորը քննությունը կարող է նպաստել ինքնաձանաչողության և ազ-

<sup>1</sup> «Սասունցի Դավիթ հայկական ժողովրդական էպոս», էջ 318:

<sup>2</sup> Չարենց Ե., Երկերի ժողովածու, հ. 3, Ե., 1987, էջ 37:

<sup>3</sup> «Սասունցի Դավիթ հայկական ժողովրդական էպոս», էջ 285:

<sup>4</sup> Հովհաննես Ռ., Հավերժական Հայը, www.granish.org:

գային հոգեկերտվածքի վերլուծության բարդ գործընթացներին: Հայկական ժողովրդական էպոսն իր մեջ ընդհանրացել է ազգային ինքնության այնպիսի արքետիպային գծեր, ինչպիսին են գոյության բնազդը, սեփական բացառիկության և անմահության մասին պատկերացումները և այլն: Աշխատանքի շրջանակներում փորձ է արվել նոր լույսի ներքո ներկայացնել դրանք, ինչպես նաև ընդգծել վերջիններիս կարևորությունը անցյալի սխալների սրբազրման տեսանկյունից:

**Арусяк Гарibyan, Проявления архетипических черт армянской национальной идентичности в армянском эпосе,-** Национальный эпос представляет собой уникальное произведение, в котором проявлены не только литературные ценности и духовное наследие данного народа, но и его этические представления, нравственные идеалы, философские и психологические аспекты мировоззрения и мировосприятия. Армянский народный героический эпос обобщил в себе такие основные архетипические черты армянской национальной идентичности, как инстинкт выживания, душевное состояние и уверенность в избранности и бессмертии своего народа и т. д. Таким образом исследование эпоса с данной позиции открывает широкие горизонты для изучения национального менталитета и идентичности, а так же очерчивает перспективы развития народа в будущем.

**Ключевые слова:** эпос, национальная идентичность, кризис идентичности, отчуждение, национальный менталитет, архетипы идентичности.

**Arusyak Gharibyan, Armenian national identity's archetypes manifestation in the armenian epic poem,-** The national epic is a unique composition, that represents not only the literary values and heritage of the nation but also the ethical norms, moral ideals, philosophical and psychological aspects of nation's worldview and attitude. Armenian national heroic epic has crystallized the main archetypical features of Armenian national identity such as the survival instinct, the state of mind and the confidence in being selectness and immortality of its nation etc. Therefore, the investigation of the national epic from this point of view opens new wide horizons for discovering national mentality and identity, and also outlines the prospects of development of the nation in the future.

**Key words:** epic poem, national identity, identity crisis, alienation, national mentality, archetypes of identity.